

1

Երեցը՝ ընտրեալ տիկնոց եւ անոր զաւակներուն, որ կը սիրեմ ճշմարտութեամբ, (ո՛չ միայն ես, այլ նաև բոլոր անոնք՝ որ գիտցած են ճշմարտութիւնը,) **2** այն ճշմարտութեան համար՝ որ կը բնակի մեր մէջ ու յաւիտեան պիտի ըլլայ մեզի հետ. **3** ձեզի հետ թող ըլլան շնորհք, ողորմութիւն **եւ** խաղաղութիւն՝ Հայր Աստուծմէ ու **Տէր Յիսուս Քրիստոսէ**, Հօրը Որդիէն, ճշմարտութեամբ եւ սիրով:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԷՐ

4 Մեծապէս ուրախացայ, գտնելով թէ զաւակներէդ **ոմանք** կ'ընթանան ճշմարտութեամբ, այն պատուիրանին համածայն՝ որ ստացանք Հօրմէն: **5** Հիմա կը թախանձեմ քեզի, տիկի՞ն, որ սիրենք զիրար. կը գրեմ քեզի ո՛չ թէ նոր պատուիրան մը, հապա ա՛ն՝ որ ունէինք սկիզբէն: **6** Սէրը սա՛ է.՝ ընթանալ անոր պատուիրաններուն համածայն: **եւ** պատուիրանը սա՛ է.՝ ընթանալ սկիզբէն ի վեր ձեր լսածին համածայն: **7** Արդարեւ աշխարհ մտած են շատ մոլորեցուցիչներ, որոնք չեն դաւանիր թէ Յիսուս Քրիստոս մարմինով եկաւ: Այսպիսին մոլորեցուցիչ ու անեռ է: **8** Զգուշացէ՛ք դուք ձեզի համար, որ չկորսնցնենք մեր աշխատանքը, հապա ստանանք լման վարձատրութիւն: **9** Ո՛վ որ զանցառու կ'ըլլայ եւ չի մնար Քրիստոսի ուսուցումին մէջ, չունի Աստուած: **իսկ** ա՛ն որ կը կենայ Քրիստոսի ուսուցումին մէջ, ունի թէ՛ Հայրը, թէ՛ ալ Որդին: **10** Եթէ մէկը գայ ձեզի ու չբերէ այս ուսուցումը, մի՛ ընդունիք զայն **ձեր** տունը, եւ մի՛ բարեւէք. **11** որովհետեւ ո՛վ որ բարեւէ զայն՝ կը հաղորդակցի անոր չար գործերուն:

ԿԵՐՁԻՆ ԽՈՍՔԵՐ

12 Զեզի գրելիք շատ բան ունէի, **բայց** չուզեցի **գրել** թուղթով ու մելանով. բանի որ կը յուսամ գալ ձեզի եւ խօսիլ դէմ առ դէմ, որպէսզի մեր ուրախութիւնը լման ըլլայ: **13** Ընտրեալ քրոջդ զաւակները կը բարեւեն քեզ:^ա

^ա Յուն.՝ հակաքրիստոս

^բ Ոմանք կ'աւելցնեն Ամէն: